

ԿՈԶԵՆ ԳԻՒՂԻ ԱԼԵՅՈՒՄԸ

Ա.

Թուրքերի տիրանալը Գանձակ-Թիֆլիզ երկարուղի գծին։ Ազատ կողոպուտ այդ գծի վերաբերյալ Պատօնության նեռազբեները։ Թուրքերի պահանջն Աղստաֆայում։ Հայերին մահացնելը «Աղստաֆա» եւ «Փոյլի» կայարաններում։ Դրաքիւնը Թիֆլիզ-Ալեյության գծի վերաբերյալ։

Չեռնարկելով Գանձակի նահանգի Դադալս գտւառում պատահած թուրք-հայկական ընդհարումների պատմութիւնը, ես աւելորդ եմ համարում կրկնել այս տեղ աշխատութեանս ըստն նպատակը, որ արդէն բացատրուած է «Բաղա գիւղի աւերումն» գրքոյին ազդաբարութեան մէջ։ *

Այնյայտ է, որ 1905 թուի նոյեմբերի 18 ին Գանձակ քաղաքում ըստկուած սոսկալի ընդհարումը ընականաբար պէտք է տարածուէր նահանգի ու այլ տեղերում, ըստ որում թուրք աղդաբնակութիւնը հեշտութեամբ նկատեց, որ այդ նահանգական քաղաքում, ուր կենտրոնացած են նահանգական հաստատութիւնները, վարչութիւնները և բարձր պաշտօնեանները, արդեպ չէ դրւում նրա սանձարձակ աւերիչ հոսանքին, և ուրեմն ընդունեց այդ երեսյթը իրքեւ խուլ ջատադովութեան նշան։ Հայերն էլ նոյն երեսյթից եղրակացընը որ իրանք արհամարուած են ու գոյութեան անարժան, ուստի իրանք իրանց ճակատագրին յանձնուած, պէտք էլ արէին իրանց ըոլոր ոյժերը փոխազարծ ջնջման դործում մահմեդականների հետ։

Սյդպէս էլ եղաւ։ Աւազակութիւնն ու կողոպուտը, աւերումն ու խորտակումը, ոճիրն ու մահը զարմանալի արագութեամբ տարածուեցին ըոլոր այն տեղերը, ուր դարեւեց և վեր դրացիւթեամբ հաստատուած էին հայ և թուրք տարրերը։ Թուրք տարրի անասելի յանդգնութիւնը հասաւ մինչև այն տեղ, որ նա արդէն դերքի տէր համարեց իրան աջ ու ձախ սկսեց տարածել իւր մոնղոլական արշաւանքները և հէնց առաջին օրից, այսինքն 1905 թուականի նոյեմբերի 18 ից, տիրացան Անդրկովկասեան երկաթուղու Գանձակ—Թէֆլիս գծին։ Դալլար կայարանում թուրք բաղմութիւնը հաւաքուած կազմ ու պատրաստ սպասում էր Գանձակից դնացքի դալուն։ Եկաւ գնացքը, տեղեկատուները լուր բերին որ Գանձակում արդէն սկսուել է...»

* Բաղա գիւղի աւերումը. Ապարագապատ 1910 թ.

Այդ լուրն առնելուն սկս, հրոսակախմբեր պատրաստապնեցից մենք իսկոյն հեծաւ ձին և իւզ յետեցից տարաւ հրոսակախմբի շարքը: Ոճքաղործութեան տեղն էր երկաթութեւնը Դալլարից գեղի նամքոր, իսկ նիւթն էր գեծի վերայ եղած քանուու և խանութով ան հայեցի արեանն ու հայքը: Այդ օրը այդ տեւ եղաւ մի քանի սպանութեւններ և կողոպուտ:

Հրոսակախմբեր պատրաստողների շարքում կային և ուրիշ գեղք ունեցաղ անձնաւորութեւններ:

Ոճքաղործ արշաւանքը արիարոր յառաջ էր գնում գեղի շագամ կայաբանը, իսկ մերժակաց թուրք գիւղերում և ամանուն կերպով սայլեր էին պատրաստում որ տռաւօտը շտապեն գեղի երկաթուղու գիծը, որ իրանք էլ մասն ու քաֆին հանեն հայեցի խանութներից:

1905 թուի նոյեմբերի 19 արշալուոր դեռ չուցուած Զագամ կայալանի հայեցի խանութները կրակին դոհ գնացին: Կային 32 ուռու զիւուուններ, քայց նրանք պաշտպանում էին միայն երկաթուղու կայաբանը: Սրանք միայն ականատես էին, եթք որ հրոսակալեամբ քաջամարտիկ խութմը յաջողութեամբ կոտորեց Զագեամի անգէն հայեցին, այլ և որոնում էր հայեցին ուռունների ընակարաններու մ:

Այս կոտորածի և հաղեցի ու կողովուտի առ թիւ Զագամ մեր երկաթուղու նաւթանցը սենեկապետը (կոնտորիք) նոյեմբերի 19 ից հեռազրում է նաւթանցը վարչութեանը հազորդելով յարձակման մանրամասնութիւնը, աւելացնում է իրանից հետեւակ խօսքեցը, սժամանակ՝ է՝ վերջապէս՝ յիշել որ բուքոր մարդիկ եղայլներ են և ժամանակ է անպաշտպան հայեցին տալ ու է ապահովութիւն վայրենի, անսանձ և զծուծ ամբոխի գեմ, որ ինչ որ անձի ճնշման տակ չգիտէ թէ ինչ է անում: ^{1/2}

Վերջապէս՝ երկաթուղու ծառայողները, որ մինչև այդ րոպէս գիծը, իրքեւ պետական համարում էին ապահով և անմատչելի, այժմ համոզուեցին որ գիծը իւր հարիւր հազարաւոր զումարի ապրանքներով ըաց է դրացի թուրք տարը առաջ և կայարանների մը քանի տասնեակ զինուորների ներկայութիւնը ապահովութիւն չէ նրանց համար: Նրանք տեսան, որ մերձակայ գիշերի թուրք բնակիչները, այլ ևս շճանաշելով երկաթուղու ոչ իշխանութիւն և ոչ իշխանաւոր, եկել խմբուել են հարիւրառը սայլեցով ու կըսում են խանութների ապրանքները, ամ

* Արշալոյ: № 62. նոյեմ. 25 — 1905 թ.

ըարների տեսակ տեսակ մժերըները, վաշոնների միջնաւոր փթերի ցորեն ու գարին: Աղայ յափշտակութեանը մասնակցում էին հաւասարապես և տղամարդիկ և կանայք և ծերեր և պատանիներ: Աղջուկտելու դնում էին իրու զուարձատեղի:

Այդ ըոլօրը տեսնելով՝ երկաթուղու ծառայողները, պիտուորախմբերի պետերը և ոմանը խոնութաններից անդադար և ամէն օր այս և այն կայարանից հեռագրներ էին, ուղարկում թիֆլիզի իրաւուցիչներին, տեղեկութիւններ էին հաղորդում, օգնութիւն ու պաշտպանութիւն հայցում և նորից էլեմնում էին անպատճեսան.... Այսպէս «Թաթլուի» կայարանայետ Կալոյեաննին, նոյեմբերի 29 ից հեռագրում է Թիֆլիզ և շարաչար խնդրում է որ 20 զինուոր ուղարկեն «Թաթլու» կայարանը պաշտպանելու, որովհետեւ, շարունակում է նա, շրջակայ գիւղերում կոտորած է սկսուել: Նոյն ամսի 30 ից 9առամբ» կայարանը նոյնալիս խնդրում է հեռագրով որ զինուորներ ուղարկեն կայարանը պահելու:

Երկաթուղծի «Աղօթակու» կայարանին կից կանգնում է վոստի կայարանը: Վերջինիս կառավարիչ աստիճանաւոր Գերազել, 1905 թուի նոյեմբերի 50 ից հեռագրում է Թիֆլիզի փոստային գլխաւոր վարչութեանը թէ փոստի կայարանը հայի շենք լինելով՝ թուրքերն սպառնում են հրդեհել և փոստի ձիերը յափշտակել, իրան էլ հայ կարծելով՝ սպառնում են մահով, ծառայողները փախչում են կոյտասնից: Սոյն այս Դելիրացիք, հետեւեալ օրը, դեկտեմբերի 1 ից հեռագրում է Թիֆլիզի փոստ հեռագրական շրջանապետին հետեւեալը. «Հայ խանութներն ամրողովին կողոպտուեցին: Թուրքերն սպառնում են այրել կայարանի շինութիւնը և ինձ էլ համարելով հայ՝ սպառնում են սպանել: Պաշտօնեաներն ապառտան են դտել երկաթուղու ծառայողների մօտ, փախել են բոլոր կառապանները, նրանց վերակացուները. մնացել է միայն մի թուրք կառապան: Եօթը ձեւ երկու կառապանն, որոնք ուղևորներ էին տարել, շեն վերադարձել: Ոսում են որ, թուրքերը սայւերը և ձիերը տարել են Դաղքեասաման դիւզ: Հարկաւոր է զինուորական օգնութիւն:»^{*}

Երկաթուղու «Թովուզ» կայարանից, խմբովին ստորագրութեամբ, գեկտեմբերի մէկին, կայարանապետ Տօկմաչելը, զօրախմբապետ պրապորուչիկ Կումիլուղու և տեղական հաշտարար միջնորդ գնդապետ Դետրովը, ուղարկել են Թիֆլիզ կողման զօրքերի գլխաւոր շտաբին հետեւեալ հեռագիրը.

* Մշակ. № 259, Դեկտ. 5-195 թ.

«Թուրքեցը յայտաբարեցին, թէ հայերին պատկանող քառասուն զագոն դարձն իրանցն է, պահանջում են որ զի՞նուորաներն ու ոստիկանութիւնը չարգելեն տանել այդ գարենաշխանութիւնը, ոստիկանները սոկաւաթիւ են, պաշտպանելու ոյժ չկայ, ինչզրում ենք օգնութիւն ու զարկել։ Պատրաստուող յանդուզն թալանը սարսափէ աղդում ծառայողներին, որոնք սպառնում են փախչել։ Դրադուններն ապահովել խաղաղութիւնը չեն կարող։ Վետարէկն 80 վերստ հեռու է։ Թուրքեցը փորձեցին ապրանքների պահեստը թալանել խելով հրացանը ծառայողների ոլաշտականութեան աւագ ըանուորից։ Արտավաճար փախչել են ուզում։»^{*}

«Թովուղ։ Կայտրանում մի քանը հայեր ունեին դարու, երկաթեղէնի և այլ տեսակ ապրանքների խանութներ, ուսոնք նոյեմբերի վերջին օվերում ենթարկուեցին յափշտակութեամ։ Սրանց տէրեցը, Խաչատրեան, Յայհաննիսեան, Մնացակոնեան, Վաղական և Արքահամեան, Խմբովին ոտորադրութեամբ և մեծ յոյսով հեռագրում են Թիֆլիզ նոյեմբերի 23 ին և յայտնում են, որ զի՞նուորները պահում են միայն «Թովուղ» կայտրանը, արիստաւն էլ իւր պահակներով հեռացել է, այս տեղից և իրանք մնալով անսլաշտական, օգնութիւն են հայցում, որովհետեւ ուելի քան 300 թուրքեր իրանց ոայլերով եկել յափշտակում են այդ թշուառների կայքը։ Էրացուցիչ տեղեկութիւնները հաւաստիացնում էին որ Խաչատրեանի և Մնացակոնեանի խանութներից տարել են 15—20 հազար դարեր և երկաթեղէն ապրանքներ։»^{**} Տեղական պըիստաւն էլ, որ հայ Սմբատ Սարտարիկեանն էր, արդարէ այդ միջոցին հեռացել, դնացել էր Վաղախ քաղաքը գաւառապետէ մօտ, ուր ընկել էր մի կորստաբեր փորձանքի մէջ և որի մասին խօսք կլինի Վաղախ քաղաքի պատմութեան մէջ։

Տեղական թուրք աղգաբնակութիւնն անդամ՝ Առևլթանովը Թովուղ կայտրանից, նոյեմբերի 30 ին ու զարկում է Թիֆլիզ զի՞նուորական շտաբին մի հեռագիր հետեւեալ բովանդակութեամբ։ «Ճնորհիւ միքանի մարդկանց, որ դրդամունք են դցում ժողովրդի մէջ, թուրքեցն անզաւալ կերպով լինելու են թալանել հայերի ունեցուածքը, սպառնում են վաղը հայերին կոտորել։ Անհրաժեշտ է զի՞նուորական ոյժ։ Խոդքում ենք օգնութիւն։ այլապէս ներկայ անվերջ կը կընա ող աւաղակութիւնները առեթ կտան ապագայում նորից կոտորած ոկա-

* Մշակ 1905 թիւ № 259 դեկտ. 5.

** Արշակոյ 1905 թիւ. № 65 նոյեմբ. 27.

լուն: Անձամբ յետ եմ պահում խառնակութիւններից ժողովողի մի վրաքը մասը: Գրգռման առաջն առնել անզօր եմ:^{*} Մի գուցէ ոմանք թիւրիմացութեան մէջ ընկնեն, թէ պ. Սութանովը ինչ մի բացառիկ անձնաւորութիւն է, որ ինքը տեղական թուրք լինելով ոչ միայն չէ մասնակցում ընդհարումներին, այլ և դէմ է այդ գաղանութեանը և մինչև անգամ հայերին պաշտպան: Սուլթանովը կայարանին մօտիկ օքիւզու թուրք զիւզի ընտկիչ է և կալուածատէր, ունի թովուզ կոստրանի մօտ տներ և շարեշար խանութներ, որոնք տուած են վաճառական հայերին վարձու: Ընդհարումներին մասնակցող թուրքերը հայերի ինքը յափշտակելու նպատակով այցել աւերել Են Սուլթանովի տներն ու խանութները և տոհասարակ նիւթական մեծ վնասներ Են հասցըել Սուլթանովին, ուստի ընդհարումները ուժ օգուտ լիներ, ոչ երբէք Սուլթանովին: Գրա համար էլ պարոնը ամէն ճիզ թափում էր արգելք լինել զոնէ իւր կալուածքի սահմանում: Սուլթանովի ակնարկը իւր հեռադրի մէջ «դրդուղների» մասին վերաբերում է իւր գրացի Խոկեանգարբէդովներին, որոնք Թովուզի սահմանում շարժման և աւերազների գլուխ էին անցել: Այսպէս ուրեմն, ամէն մի հողում քէզերի պարագլուխ խմբերն ունեն իւրեանց սահմաններն: Նամքորի հողում աշխատում էին համեստոկիները: Թովուզի սահմանում Խոկանդարբէդովները և այլն և ոչ մի պարագլուխ խումբ չէր ուզում իւր հայութ աշխատանիքի պապարբէզը թողնել ուրիշին:

Խոկեանգարբէդովների մասին հետաքրքրական տեղեկութիւններ կան Դաղտիս քաղաքի վերայ յարձակման պատմութեան, մէջ:

Մինչև այստեղ մենք տեսանը, որ երկաթուղու երկարութեամբ, Դաղտարի և Աղստափոյի միջև, թուրքերը անարզել գործում էին, ինչ որ իրանց ցանկալի էր: Դժի տէրը և հրամայողը նրանք էին, Սոկայն դեռ այսօքանով նրանք զոհ չմնացին: Նրանք կամեցան տալ իրանց յանցաւոր գործողութիւններին մի տեսակ օրինականութիւն: Նրանք պահանջում էին իրանց սճրագուծութիւններին մասնակից անել պետութեան ծառայողներին՝ երկաթուղու ժանդարմներին և այս նպատակով նրանք Աղստափա կայարանում բացառեցին կայարանի պաշտպան զօրակամբի պէտ պողպարուչիկ Զուտինին, որպէս զի թոյլատրուի իրանց, թուրքերին, մասնել զնացքի մէջ և ժանդարմների ներ կայութեան մը խուզարկութիւն կատա-

* Մշակ 1905 թ. № 259, զեկուեմ. 5.

ըել հայերի մօտ, զէնք ու ռազմամթերք որոնել, որովհետեւ, հաւառացնում էին նրանք պօդպարութիւն Չուտինին, խիստ զայրացած կերպով, որ Վարս և Երեանեան դժերի վերայ հայերը խուզացկու մ են թուրքերին:

Սակայն Աղոստաֆի թուրքերը մի հանգամանք մոռացել էին կամ նենդութեամբ լոել էին. այն է, որ եթէ յիշեալ գծերի վերայ հայերը խուզարկութիւններ էին կատարում, քայց թուրքերին չէին սպանում, նրանց միւս ինչքը չէին յափշտակում, երկաթազգծին տիրապետող չէին, ինչպէս այդ ընդարձակուէն անում էին տեղական թուրքերը Գանձակ-Թիֆլիզ գծի վերայ: Աղոստաֆայի թուրքերը ձդ տելով ձեռք բերել խուզարկութեան գործի մէջ ժանդարմների դերը, ժանդարմներին թոյլ էին տալիս միայն ներկայ և ականատես լինելու:

Թուրքերին ի՞նչ հաշկաւոր էր թոյլաւութիւն պահանջել, երբ նրանք, ինչպէս ցոյց են տալի պատմութեանս անհերքելի փաստերը, տէր և հրամայող էին Երկաթուղուն, չէին ճանաչում ոչ իշխանաւոր և ոչ իշխանութիւն, անարդել և ազատ անում էին ինչ ու իրանց կամքը թոյլաւում էր և ուրեմն ոչ մի կարիք չունէն խնդրել Չուտինի միջնորդութիւնը: Եւ անհեռատես ու թուրքերի հոգեքանութեան մէջ անփորձ Չուտինը ոչ միայն թոյլ է տալի իրան, այս խնդրի մասին, մըտնել վոխաղարձ խորհրդակցութեան մէջ թուրքերի հետ, այլ և միջնորդի դեր է կատարում՝ իմացնելով այս հանգամանքը Թիֆլիզի գլխաւոր զարշութեան դնդապետ Առլաւ Եօվին, հետեւալ հեռագործ: «Ներկայ դեկտեմբերի մէկին Աղոստաֆա կայտանում հաւաքուած թուրքերին, որոց մէջ կային և շատերը շրջակայ դիւղերից, ես աշխատում էի պարզել նրանց տրամադրութիւնը և թաշգանի միջոցով իմացայ, որ թուրքերին շատ լաւ յայտնի է, որ Թիֆլիզ-Ալեքսանդրապոլ-Կարս-Երևանեան գծի վերայ հայերը դնացքներում խուզարկում են թուրքերին: Թուրքերը սաստիկ վրդովուած են այդ հանգամանքից և պահանջում են, որ նրանց իրաւունք տրուի հայերի խուզարկութիւնը կատարել Աղոստաֆա կայարանում ժանդարմների ներկայութեամբ: Խնդրում եմ նոյնպէս թոյլաւորել յետ ուղարկելու Թիֆլիզ այն բոլոր ազգանքները, որոնք դտնւում են կայարանի փակուած խանութում և պատկունում են ճանապահուն ընկած հային, որովհետեւ այդ ազգանքները մէծ հրապոյը են ներկայացնում թուրքերի համար: և այն ոյժով, որ իմ տրամադրութեան տակ է դտնւում, այն է 35 զինուոր, ես չեմ կարող պաշտպանել կայարանի ծառայողների գոյքը և կետնքը և Երկու հարլւր վագոնի շամի ապօանք-

աերի կողապուտի առաջն առնելը։ Պօղպարուշիկ Զուտինս^{**} :

Այս հեռագրի հինգերուղ օրը, այն է 1905 թուի դեկտեմբերի 6-ին, երեքշաբթի օրը, Աղոտաֆա կայարանում, թուրքերը, որոնք միայն հինգ օր առաջ Զուտինսին միջնորդին ընտրում խուզարկութեան համար, այնպիսի մի ոճիր գործեցին նոյն կայարանում, ամբողջ բաղմութեան առաջ, օր ցերեկով, որից դողաց և սոսկաց կայարանը։ Դնացքը տուառական 10 ժամին Բազուխց Եկատ կանգնեց Աղոտաֆա կայարանում ըերելով իւր հետ մի հայ սկասանի, 15 տարեկան։ Սրան ականելուն պէս թուրքերը ամենից առաջ վայր քաշեցին, ատրճանակի դնդակով դաշկին ճակատին և խանչալը կոխեցին մարմնի մեջ ու տեղն ի ակզր մահացըն։ Դնացքը ճանապարհորդները և կայսրանի ծառայողները ցնցուեցին այդ զզուելի տեսարանից, իսկ զնացքը կոնդուկտորները հասնելով Թիֆլիզ, միահամուռ բողոքել են Երկաթուղարքին վարչութեանը, թէ այսպիսի պայմաններում ծառայել անհնարին է^{***}։

Հենց այս գէպը մասին վերոցիշեալ պօղպարուշիկ Զուտինը հեռագրեց Թիֆլիզ զինուորական շտաբի դնդապետ Սալահեովին հետեւեալ կերպով։ անդստաֆա ն գեկտեմբերի։ Այսոր № 17 զնացքը կանգ առնելիս՝ թուրքերը դուրս քարշեցին Երևրդ կարգի վագոնից Մարտիքս 0հանեանին և մասացու կերպով վիրաւորեցին։ Կային շատ անցարդներ և բնդհանուր շփոթի մեջ անհնար եղաւ ոկզրում իմանալ գուծի էութիւնը և ինձ իմաց տուին ոճերը կատարուելուց յետոյ։ Զօրքը հետ զնացի եռ ոճը տեղը և ձերքակալեցի յանցաւոր համարուածին, սակայն վկաները ըոլովը մերժեցին ցուցմունք տար վախենալով թուրքերից։ Խնդրում եմ զօրեղացնել պահակագուշուղը, որովհետեւ սարաֆն/կները քիչ են և նսանցից շամերն էլ թուրք։ Պօղպարուշիկ Զուտինս^{****}։

Զմոռանամ յիշատակել այսուեղ և մի այլ քսամնելի աեռարան, որ պատահել է գեռ ևս նոյեմբերի 28. Աղոտաֆից հետեւեալ Փոյլի կայարանում։ Երբ Դազման քաղաքում նոր սկսուելու լին խառնակո, թիւնները, նրա հայ բնակիչները սկսեցին ցըռել գեպի հայ գեղեցիքը և ոճանը դեպի Թիֆլիզ։ Վերջիններից եօ և Դազմանում վերաբնակուած Օրդուրամի

* Մշակ № 259 դիկտեմ. 5 1905 թիւ.

** Արշակուր 1905 № 71 դիկտեմ. 7. Մշակ 1905 № 245 դիկտեմ. 8.

*** Արշակուր 1905 թ. № 72.

ուսընեան դիւզացի, 27 տարեկան երեմիս Առաքելեանցը Փոյլի կոյսուանում թուրքերը հասում են Երեմիային երկրորդ կազզի վագոնից ու բազմութեան առաջ մորթում են: Խայրը, ով ներկայ էր, փաթոթուում է արեւնշաղախ որդուն, բայց դազանները խաչածի հաւուածներով չետ են մզում մօրը և ուղուն մորթում: Այս զարհուրելի տեսարանին երեք ականատեսներ լսմբավին մի նամակ են գրել «Առշալույ» լուսպրին, որի մէջ անցքը պատմելով աւելացնում են, որ կոյսուանում կանգնած էին իրաց ու ուղացի հետ Դերբենդեան գնդից մի խումբ զբնուած զբնուածներ, որոց դիմեցին վագոնի պատուհանից մի քանի պահեստի սպաներ և պահանջուած էին կուկել աճրադորձներին, իսկ դիմուրները պատասխանեցին թէ «Հրամայուած շէ»: Նամակին ստուգը են Старший Фельдшеръ Владикавказскаго Военнаго госпитали Ռավան Чарковъ, առաջին հաջուկ հաջորդաբանъ ու առաջին օլիմպիադայի առաջին հաջորդաբանъ Վահագինը:

Ահա ասովիսի ուսուանուելով որոշ ուղուած էր Երկաթուղու դիմը: Գտնածուից մինչև Թիֆլիս, ուր երկրի խետ աղջաւակութեւուր թուրքերից էլլու ժամանակի ընթացքում, այն էլ մի քանի օրուայ մէջ, բռնաւալութեան սավաս, իսկ այդ շորհիւ հանգանակների առնձն ձուռաթիւն ձեռք բերելով, թուրքերը հարաւ այն անդուսով և լիով յանդկանութեան, ոչ ոյլ շէին հետ հարցուում ոչ հայ, ոչ ռուս, ոչ թուրք, ոչ վրացի, ոչ մասնաւոր և ոչ պետական իր, այլ հաւասարապէս յափշտակում, կողոպտում տանում էին, ինչ որ դժի լիերաց գտնում էին: Յարձակուում էին Երկաթուղու ստորին ծառաց յոկների վերայ ու դիաներում, սպանում, կողոպտում տանում էին, զեշեները կայսրանուերում վագոնների մականուները կոռուպտում ու տանում էին միջի ապահովը, ինչպէս այդ արեւ էր շատերից միուր Փոյլու դիւզացի հաջի Բայրամ Ալիսովի, որ և պահապահ զիւռուսի դնդակին դահ զնաց:^{**}

Ոյրան ուսուարձակ և յանդուզն այլընտութիւնից յետոյ պետական երկաթուղու վերայ, զեռ ևս կային Զուտիններ, որոնք իրաց անփորձութեամբ հաւատում էին շարադրութիւնների հարիւ երեսանի խօսքերին և մաշնորդութիւններ էին անում ու թուրքերը վաղոններում խուզաւկութիւններ կառաջեն ժամանակաշրջանի ներկայութեամբ հայերի

* Արշակոյ 1905 թ. № 70. դեկտեմբ. 6.

** Մշակ 1906 թ. № 6 Յունիս 12.

դէմ։ Զուտինները միամսութեամբ կարծում էին թէ այդ նոր խնամինները միայն հայերի դէմ են, բայց յետոյ համոզուեցին. որ իրանք՝ Զուտիններն էլ ազատ չեն աւագակարարոյ յարձակումներից և սպառութիւններից։

Այն թբքական խաժամուժ աճըսիը, որ Աղստաֆոյում Զուտինի ձեռքով ժանդամական իրաւունքներ էր ուզում ձեռք բերել, շատ լաւ դիտել, որ Երևանի դիմքը Թիֆլիզից մնչե Նարաքիլիսա նոյնպէս գահուում էր թուրք տականքների ձեռքում և ի զուր էր մէջ տեղ բերում հայերին, խուզարկութեան իրաւունք ձեռք բերելու նպատակից։ Սրա համար կան բազմաթիւ անհերքելի փաստեր. իբրև պատմական ապացոյցներ։ 1905 թուի նոյեմբերի 26, շաբաթ օր, «Սաղախուկայառանում. Թիֆլիզից եկող հայերից թուրքերը խլել են ատրճանակ, խանչալ և ինչ որ դտել են»^{**}։ Կազմակի գաւունի մի քանի հայ զիւղերից, որոնք մօտ են Թիֆլիզ Երևան եւ կաթուղուն, չելն կարողանում գնալ «Սաղախուկայառանը, ըստ որում ճանապարհին երկու թուրք զիւղեր-Քեորփիլի և Լամբալի-պատահողին կամ թալանում էին կամ սպանում անհետացնում։ Ուստի հայերը հարկագրուած էին ահադին պառյա անել կողը և Շինող հայաբնակ զիւղերով հասնել Աղթալայ կայարանը։ Չնայած այս զդուշութիւններին, այնուամենայնիւ հայ ճանապարհորդները չելն կարողանում մահուան ձեռքից փախչել։

Օրինակ. Կազմակու Պօշդոթան զիւղացի արհեստաւորներ Զաքար Ալեքսաննեան և Եղբարք Մատթէոս և Յովսէփ Մարգարեաններ, 1906 թուի տպրեւի 19-ին իջել են վագոնից «Ճանդար» կայառանում, որպէս զիւղեր գտնեն Միքայէլ Արամեանցի կալուածքում, բայց եվկաթուզուն մօտ, Մուղանլի (Մէծ Գէորգ աշխ) և Քիւրդտար թբքաբնակ զիւղերի արանքում միայն Մատթէոսը երկը գնդակից հրաշքով ազատում է, իսկ մեւս երկուսին որով մաս-մաս կոտորում են և ձգում երս թէ գետի մէջ։ Անցքի վայրն էին գնացել դաւուաղեար և զեներալ Նահանգապետի օդնական գնդապետ Զալտառեօվը, որ յանցաւորների վերայ 3800 սուրլի տուգանը են դրել^{***}։

Այդ խառնակ ժամանակամիջոցում թուրք տականք բազմութիւնը խմբերով շաջապառում էր Թիֆլիզ-Երևան երկա-

* Արշալոյ 1905 № 66.

** Մասի 1906 № 94.

թուղու Յորչալու գաւառի կայտրանները և դիշեր ցերեկ սպասում էր աւարի: Վառուած իրանց գազանային իղձերով, նրանք համբերութեամբ տանում էին ցուրտն ու քաղցր կողոպուտի յուսով: Նատ անգամ էլ ընդհարման ժամանակ ոճանը մահուան զոհ էին զնում: Այդ ժամանակից Նազախի հայերի ըերանում մնացել է մի տուակ, կազմուած մի պառաւ թուրք կնոջ ասածից: Պառաւի որդին չուալին ուսին զնացել է աւարի երկաթուղու շուրջ և այլ ես չէ վերադարձել... Պառաւ մայրը սրտի կոկծանքով յայտնել է իւր դարդը թէ ռէօղը դա գետտի, չուալ դա գետտի:» այսինքն «ինքն էլ զնաց, չուալն էլ զնաց:

Այսպէս էր իրերի զրութիւնը երեանի երկաթուղու վերայ Յորչալուի սահմանում, երբ Ազոտաֆի թուրքերը հայերին խուզարկելու արտօնութիւն էին խնդրում կամ աւելի ճիշդ՝ պահանջում: Ահա հայերի անելանելի զրութիւնը այդ երկու գծի վերայ Դանձակի ու Յորչալուի սահմաններում: Ուր որ զնային, մահն արձանացած կանգնում էր նրանց դէմ: Մինչեւ անգամ Դալլար կայտրանի ծառայողները հեռագրեցին Թիֆլիզ՝ թէ զդուշացրէր բոլոր հայերին որ չգան երկաթուղով, ըստ որում տեղի թուրքերը պատօսասուել են կանգնացնել զնացքները և ճանապարհորդ հայերին անխնայ կոտորել: Այսքանը բաւական է:

Չէ՞ որ ես գրում եմ Արողէն գիւղի աւերման պատճութիւնը, հապայ ինչի մի առանձին գլուխ նուիրեցի երկաթուղիների արիւնոտ դէպքերին: Այս շեղումն արուած է դիտմամբ. Նախ, որ պատմութիւնից շանսայտանան նըա մի մասը, այսինքն երկաթուղիների վերայ եղած այլանդակ պատահարքները, երկրորդ՝ ցոյց տամ որ եթէ միլիոնների արժեքը ունեցող և պետական անտեսական տուաջնակարդ հաստատութիւններից մընը, որպիսիքն են Թիֆլիզի երկաթուղիները ուր կան խստագոյն կարգ ու կանոններ, տասնեւակ հազարաւոր ծառայողներ, ժանդարմական սատիկանութիւն, երկաթուղային զօրաբաժին (բատալյոն) և այլն և այլն մի խօսքով մը ահազին պետական, հասարակական, զինուորական հաստատութիւն մատնուած էր թուրք ամբոխի աւերիչ կամայականութեանը, հապայ ի՞նչ կլինէր խեղջ ու կըակ, անտէր անտերական 30 անից կազմուած փոքրիկ միայնակ հայ Արողէն գիւղի զրութիւնը, որ դըած է Թովուզ կայտրանից հազիւ 8 վերստ հեռու դէպի Կուր գետի ափերը, ինքն էլ շրջապատուած տասնեւակ մեծամեծ թրքարքնակ դիւղերով: Աշտեղից յուսաք օդնութեան ձեռք թշուառ Կըողէնը: Խնքն անդօր, իսկ շրջա-

պատող ընչաքազց դիշատիչները բիւրաւոր։ Սոսկալի գըռւթիւն, գաղանացած բարքեր և այլանդակ ժամանակներ։ Ապագայ սերունդը սոսկումով պէտք է յիշէ այս արիւնուա ժամանակները։

Վերև յիշատակուած պատմական փառտերից երեսում է, շատ աեղեղից կայարանապէտները, զօրախմբի պէտերը, փոստի կառավարիչների պէտերը անդադար դիմում էին ուրհարկն է զօրք ու պաշտպանութիւն ստանալու իրանց և ըստ երեսութիւն կարծես բաւարարութիւն չէին ստանում։ Այս առերես անընական երեսիթի բացատրութիւնը մենք գտնում ենք Կովկասի դիսաւոր զինուորական շտաբի սլետ գեներալ Ռերխմանի խնդրի մէջ, որով գեներալը դիմել է Կովկասի Փոխարքայի դիմանատանը, յայտնելով որ հեռագրական գործադրութիւննամառով նշանակած զօրքը ու օգնութիւնը գտուարութիւնների է հանդիպում, ուստի անհրաժեշտ է որ կայսեր համանները ուղարկուեն իրանց տեղերն առաւել շռտափաթ ։

(Կուրունակուի)

Քաջիկունի.

Իւ կետնիս շէմքում մառախուզն ու մոլդ

Ըստւար, տնօթափանց շղթայ են կապել.

Ես միշտ անհամբեր, նրանք միշտ անփոյթ

Արյայտն ու հեռուն ինձանից ծածկել,

Դեռ կետնիս շէմքում դեռ նոր առաօտ,

Ա՞յս ձեզ պիտ թաղեմ, դեղեցիկ յուշեր,

Ես լոյսի, յոյսի, արեի կարօտ,

Իսկ առջեռուած մռայլուած զիշեր։

Հազիս թե սուած, թռչում է պերկ։

Ես ձեզ կ'զանեմ երազանք ու յոյս։

Արդեօք սե՛, մթին գիշերուոյ ետեւ։

Դու թագնուած կան՝ ցնորը Արշալոյ։

Կերու Ուսունի

